

25 հունվարի 1919թ.

*Նախագահ* - Խորհրդի նիստը հայտարարում են բացված: Նախքան օրակարգին անցնելը դժբախտություն ունեն հայտարարելու ձեզ, որ Թիֆլիսում բժավոր տիֆից վախճանվել է ընկեր Ստեփան Ջորյանը: Ստեփան Ջորյանը՝ Ռոստոմը, դաշնակցության հիմնադիրներից է: Նա մեծ հեղափոխական էր, որի պատճառով և սիրված էր բոլորի կողմից: Այսօր հանձին նրա հայ ժողովուրդը կորցնում է իր մի հազվագյուտ զավակին, մի մարդ[ու], որը 30 տարի շարունակ նվիրված է եղել իր ժողովրդին, իր ուժերը տվել է նրան: Կարելի է ասել, որ ո՛չ Տաճկաստանում, ո՛չ Ռուսաստանում և ո՛չ էլ Պարսկահայաստանում չի եղել հեղափոխական մի ակտ, որի մեջ ակտիվ մասնակցություն ունեցած չլիներ հանգուցյալը: Նրա վերջին խոշոր գործը եղել է Բաքվի հերոսամարտը: Հանձին Ռոստոմի հեղափոխական աշխարհը կորցրեց մի փայլուն դեմք: Հարգենք նրա հիշատակը ոտքի կանգնելով (ոտքի են կանգնում):

Օրակարգի հարցերն են.

1. Կառավարության զեկուցումը.
2. Դաշնակցության ֆրակցիայի առաջարկը պարենավորման հարցի մասին.
3. Դաշնակցության ֆրակցիայի առաջարկը՝ խնամատարության միջնախորհրդունը խնամատարության և աշխատանքի միջնախորհրդունը վերածելու մասին.
4. Օրինագիծ հաշմանդամ զինվորների ապահովության մասին.
5. Օրինագիծ բամբակի գնման համար ֆինանսների միջնախորհրդին 10 միլիոն վարկ տալու մասին.
6. Օրինագիծ ֆելդշերական պարտադիր կուրսերի մասին.
7. Քաղաքների միության ծառայողների լիկվիդացիայի հարցը.
8. Բանտարկյալ Ի. Նամազովի ներման հարցը.
9. Ընթացիկ գործեր:

Խոսքը պատկանում է արտաքին գործոց պարոն միջնախորհրդին:

*Արտաքին գործոց միջնախորհրդի* - Խորհրդարանին պիտի հաղորդեն այն տեղեկագիրը, որը ստացվել է Վրաստանի հետ բանակցելու գնացած մեր պատգամավորությունից: Մինչև այժմ վերջինիցս, հաղորդակցության անկանոնության և բանակցությունների անորոշության պատճառով, մենք տեղեկություն չունենք: Այս տեղեկագիրը կոնֆերանսի կողմից ընդունված է, բայց դեռ ստորագրված չէ: Հավանորեն ստորագրելու ժամանակ կլինեն աննշան փոփոխություններ: Տեղեկագիրը հետևյալն է.

Постановление,

принятое на конференции уполномоченных представительств Грузии и Армении, при участии представителей союзного командования, под председательством полковника британской службы Стюарта с 9 по 17 января 1919 года

Уполномоченный представитель Союзного Командования и председатель Конференции-полковник британской армии Стюарт.

Представители Франции-капитан Французской службы Пуа-де-Бар и Гасфельд

Французский консул в Тифлисе Дюруа.

Представители Грузинского правительства: Е. П. Гегечкори, Н. В. Рамишвили, Г. Д. Журули, генерал Гедеванов, К. Б. Сабахтарашвили, К. П. Канделаки, А. В. Мдивани, полковник Джапаридзе.

Представители Армянского правительства: М. Арутюнян, С. Мамиконян, генерал Корганов, С. Хачатрян, Г. Тер-Хачатрян, А. Хондкярян.

I. Граница Борчалинского уезда нейтральной зоны:

а) Северной границей нейтральной зоны в Борчалинском уезде должна служить линия, соединяющая пункты, занимаемые грузинскими войсковыми частями к 24 часам 31-го декабря нового стиля 1918 года.

Северной границей нейтральной зоны Борчалинского уезда, вперед до изменения ее направления на места в зависимости от землепользования сельских обществ, считать:

Г. Легли-Даг, прямая линия по хребту на с. Ирганчай, прямая линия на высоту 798, далее на высоту Кулудаш (855,5), высоту 676, сел. Сааты, высоту 910, высоту 739, с. Джандар, выс. 735, выс. 694, сел. Ах-Керпи, прямая линия на сел. Опрети, выс. 492, развалины церкви у Ходжорни, сел. Бардадзор, с. Садахло, ст. Садахло-гребен от цифры 1554, что к северу от Садахло, далее до высоты 2660 (гора Тана-даг), далее на надпись Родник, что к северу от надписи скала Хача-Каи́а-гора Палутлы-Баши.

Сел. Ирганчай, сел. Сааты, Джандар, Ах-Керпи, Опрети, Ходжорни, Бердадзор, Садахло остаются к северу от предстируемой линии.

б) Южной границей нейтральной зоны Борчалинского уезда считается линия Дисех-Джалалоглы, определенная соглашением 25 декабря 1918 года, подписанная генералом Рау́крофтом, полковником Шардиньи и председателем Грузинского правительства Н. Н. Жордания, каковое постановление было подписано представителем Республики Армении – М. Арутюнянцем 29 декабря 1918г. в селении Караклис.

II. Численность грузинских и армянских гарнизонов в Борчалинском уезде и грузинского в Ахалкалакском уезде:

1. А. Грузинские гарнизоны в северной части Борчалинского уезда:

а) Отряды пограничной стражи в общей сложности не свыше 200 человек на постах от границы Ахалкалакского уезда до селения Опрети исключительно .

б) У станции Ашага-Сарал батальон трехротного состава, общей численностью не свыше 360 солдат, считая в том числе и нестроевых, пулеметная рота (команда) в составе 4 пулеметов, не свыше 50 солдат 2 орудия при соответствующей прислуге. От батальона могут быть выставлены заставы в с. Опрети и Садахло, каждая не свыше 60 солдат.

в) Отряд пограничной стражи общей численностью не свыше 50 человек на постах от надписи Родник, что к северу от надписи скала Хача-Каи́а от впадения реки Храм в реку Куру.

Б. Армянские гарнизоны в южной части Борчалинского уезда:

а) Рота не свыше 125 солдат, считая и нестроевых, в районе ст. Колагеран, с. Дисех.

б) В районе Джелалоглы, из Гергеры и Николаевки батальон 3-х ротного состава, общей численностью не свыше 360 человек, считая в том числе и нестроевых; пулеметная рота (команда) в составе 4-х пулеметов не свыше 50 солдат, 2 орудия при соответствующей прислуге.

в) Роты не свыше 125 солдат, считая и нестроевых, в районе Удельное Имение (Березовая балка)-Ново-Покровка.

В. В общем, грузинские гарнизоны в северной части Борчалинского уезда с Цалкой и Армянские – в южной части того же уезда не должны превышать 660 солдат в каждой части с соответствующим количеством артиллерийской прислуги при орудиях.

Г. Стороны имеют право заменить пехотные части соответственными по количеству солдат кавалерийскими частями.

Д. Обе стороны обязуются выполнить условия, обозначенные в пунктах А, Б, В к 24 часам 14 января нового стиля 1919 года.

1. Гарнизон в Ахалкалакском уезде будет из 225 штыков пехоты (2 роты) и пулеметной команды из 2 пулеметов.

III. Демобилизация.

а) Стороны обязуются приступить к демобилизации с 15 января и закончить ее 21 января 1919 года, доведя свои армии до штатов мирного времени.

IV. Обмен военнопленных и освобождение интернированных.

а) Обе стороны обязуются приступить к немедленному обмену военнопленными и освобождению задержанных, категории коих перечислены ниже:

1. Военнопленные, захваченные во время военных действий, принадлежащие к составу неприятельской армии.

2. Лица призывного возраста, не принимавшие непосредственного участия в боевых действиях, задержанные лишь по национальному признаку и объявленные военнопленными, должны быть освобождены немедленно и доставлены бесплатно по железной дороге в пункты их задержания.

3. Лица, состоящие на государственной службе республик и в момент начала вооруженного конфликта задержанные на территории противной стороны, должны быть освобождены немедленно.

4. Лица, состоящие на службе в войсковых организациях Республики Армении к моменту возникновения вооруженного конфликта и задержанные в пределах Грузинской Республики, должны быть освобождены немедленно.

5. Пунктом обмена военнопленными, захваченными во время военных действий, избирается железнодорожная станция "Караклис".

6. День обмена военнопленными, о коих идет речь в пункте первом настоящего постановления, на станции Караклис назначается 20 января 1919 года по новому стилю. К этому времени должны обеими сторонами подведение на указанный пункт все военнопленные офицеры, чиновники, врачи и солдаты, где и должен быть произведен обмен.

7. Эшелоны военнопленных должны быть сопровождаемы представителями военных министерств обеих сторон с точными списками военнопленных в двух экземплярах, один из коих передается приемщику противной стороны.

8. Наблюдение за проведением в жизнь постановлений, указанных в пунктах 2, 3, 4 просить принять на себя представителя от высшего командования союзников в Закавказье.

V. Управление нейтральной зоны Борчалинского уезда.

1. Смешанная администрация под руководством контролем союзников.

2. Непосредственное управление принадлежит коллегиальному уездному комиссариату, состоящему из представителей, назначенных по одному от грузинского и армянского правительств, под контролем Союзного командования. При разногласии по каким-либо вопросам вышеуказанных представителей, вопрос решается представителем союзного командования.

3. Следующая низшая – сельская администрация выбирается местным населением.

4. Подробности судебной и финансовой деятельности и инструкции вырабатываются комиссариатом.

5. Расходы по управлению несет англо-французское командование с отнесением расходов в будущем на то государство, к которому отойдет спорная полоса.

VI. Железнодорожная линия в нейтральной зоне.

а) В виду отсутствия соглашения между сторонами по вопросу о железнодорожной линии на нейтральной зоне и заявления делегатов армянского правительства, что решение этого вопроса они представляют Союзному командованию. Председателем было решено на основании полученных им инструкций, что железнодорожная линия в нейтральной зоне передается в управление Грузинских железных дорог под контролем Союзного командования.

VII. Наблюдение над администрацией Ахалкалакского уезда

а) За грузинской администрацией в Ахалкалакском уезде имеет наблюдение комиссия союзников, в которую входят представители от местного населения.

VIII. Дипломатические отношения между республиками Армения и Грузия

а) Для сношений со специальным вопросом делового характера между Арменией и Грузией учреждаются временно дипломатические агентства, возглавляемые одним лицом, объем полномочий коих определяется взаимным соглашением правительств обеих Республик.

IX. Финансовый вопрос.

Обе стороны пришли к следующему соглашению:

а) Армении должны быть выданы боны на сумму в 80 миллионов рублей, равную той сумме, которую получили в отдельности Грузия и Азербайджан согласно договору, заключенному между ними 15 ноября 1918 года.

б) Выпускается 4-ая серия Закавказских бонов, количество коих определяется взаимным соглашением, о каковом доводится до сведения союзной миссии.

в) Вопрос о секвестированных суммах и ценностях по заявлению представителей Грузии на сумму в 13.600.000 рублей – снимается с обсуждения настоящей конференции и представляется разрешение по взаимному соглашению между правительствами Грузии и Армении, а если такового не последует, то стороны обращаются к арбитражу Союзного Командования.

X. Все остальные вопросы, не обсуждавшиеся на настоящей конференции, по взаимному соглашению обеих правительств, а в случае недостижения этого соглашения, Грузия и Армения могут обратиться к арбитражу союзного командования.

Այնուհետև մի քանի տեղեկություններ կարող են հաղորդել Կարսի շրջանի դրությամբ մասին: Անցյալ անգամ զեկուց[եց]ի հունվարի սկզբին եղածի և ընդունված պայմանագրի մասին: Ներկայումս տեղական մի շարք պատճառներով պայմանագրի կետերը դեռ չեն իրագործված: Դեռ մեր աղմինիստրացիան չի մտել Կարսի շրջան: Դրա պատճառով էլ Ալեքսանդրապոլում հավաքված գաղթականությունը չի կարողանում մտնել Կարսի շրջան:

Արշ[ավիր] Ղազարյան - Ուրեմն անգլիացոց հետ եղած մեր գրավոր պայմանագիրը ժամանակավորապես է՞, իր իրագործումը չի՞ ստանում, թե՞ այլևս հայկական աղմինիստրացիան և գաղթականությունը չպիտի մտնի Կարս:

Արտ[աքին] գործ[ոց] մինիստր - Սա անորոշ է: Իմ կարծիքով դա ժամանակավոր է: Աղմինիստրացիան և գաղթականությունը կմտնի Կարս, բայց թե երբ պիտի լինի սա, դեռ անորոշ է:

Բարայյան - Ալեքսանդրապոլում Արփաչայի ափերին կուտակված գաղթականությունը սովից կտորրվում է: Սակայն նորա դեռ չեն կարողանում մտնել Կարսի շրջան: Անգլիացիք պատասխանատու են դրա համար: Ի՞նչ է մտածում այս մասին մեր կառավարությունը: Եթե այս դրությունը մի քանի օր էլ շարունակվի, այն ժամանակ գաղթականության վերադարձի մասին այլևս խոսք չի



**Մինսխորյան** - Մենք զգում ենք այդ: Մեզ առաջարկում են տերիտորիայի ընդլայնում: Մենք չենք ուզում երկրներ, ծովեր, որովհետև շատ շուտով մենք այլևս բնակչություն չենք ունենա մեր այժմյան տերիտորիայի բնակչության չափ: Պետք է մենք այդ բանը հայտնենք դաշնակիցներին: Թող նրանք իմանան, որ իրենք քաղաքականությունից հուզվում է մեր հասարակությունը: Միակ միջոցը դաշնակիցների վրա ազդելու՝ դա է:

Գալով կոնկրետ առաջարկներին, պիտի ասեմ, որ երբ առաջ է գալիս ժողովրդի մահը, պիտի ամեն միջոցների դիմել: 2½ ամիս առաջ կոմիսիաների խառն ժողովում մեկը առաջարկեց Ամերիկայից ցորեն բերել, սակայն դա միայն ծիծաղ առաջացրեց: Եթե այն ժամանակ ընդունեինք այս առաջարկը, գուցե և այժմ ցորեն ունենայինք: Այժմ պիտի ընդունենք այս առաջարկը: Լավ է ուշ, քան երբեք: Դանդաղելն այլևս անհնարին է: Մեր գոյության հարցն է դրվում: Եթե մենք անլեզալ էինք գործում, շատ բան էինք անում, սակայն այժմ մեր եռանդը թուլացել է:

Վերջացնելով իմ խոսքը, ես առաջարկում եմ արտահայտել պառլամենտի հուզված կարծիքը դաշնակիցներին և դիմել կոնկրետ քայլերի ցորեն ձեռք բերելու ուղղությամբ:

**Ազատյան** - Պարենավորման հարցը օրակարգի երկրորդ հերթին է դրված, սակայն պարենավորման միջոցների պաշտոնակատարը անսպասելի կերպով զեկուցեց այդ մասին և առաջարկեց խորհրդի նախագահին ուղարկել Տփլիս, անգլիական հրամանատար գեներալ Միլլի մոտ՝ հացի համար: Այդ առաջարկը բոլորովին նոր առաջարկ է, որի մասին մենք չենք խորհրդակցել, ուստի առաջարկում եմ կամ այդ հարցը հետաձգել հաջորդ նիստին, կամ մեկ ժամ ընդմիջում անել:

**Վրացյան** - Ճիշտ է, որ կառավարության առաջարկը՝ խորհրդի նախագահին Տփլիս ուղարկելու խնդիրը ֆրակցիաները քննության չեն առել: Քանի որ ֆրակցիաներից մեկը առաջարկում է մի ժամով ընդմիջում, մենք ոչինչ չունենք այդ առաջարկի դեմ, միայն թե այսօր և եթե այդ հարցը պետք է քննության առնվի:

**Ազատյան** - Ես առաջարկում եմ այդ հարցը հետաձգել հաջորդ նիստին, որովհետև այժմ ոչ մի ֆրակցիա այդ առթիվ պատրաստի ծրագիր չունի. եթե կառավարությունը այսօր պատրաստ է ծրագիր տալու, ես ևս համաձայն կլինեի այս նիստում քննության առնելու դրված հարցը:

**Պարենավորման միջոցների պաշտոնակատար** - Ի նկատի ունենալով, որ Արփաչայի այս ափին խոշորագույն թվով գաղթականներ են հավաքվել Կարս գնալու համար, երկրորդ՝ որ Կարսում բավականին պարեն և ցորեն կա, պետք է այստեղից մի պատգամավորություն ուղարկել Թիֆլիս, որպեսզի նա զեկուցի ստեղծված կացության մասին և խնդրի, որ Կարսում գտնված հացի մի մասը փոխադրվի Հայաստան: Այդ պատվիրակությունը թերևս դիմի ֆրանսիացիներին, որովհետև հենց նոր մենք տեղեկացանք, որ ֆրանսիացիները Սալոնիկում հիմնել են հացի պահեստ՝ քայքայված և քաղցած ազգերին բաժանելու համար:

**Նախագահ** - Ո՞վ համաձայն է, որ Թիֆլիս պատգամավորություն ուղարկելու հարցը հետաձգել, թող ձեռք բարձրացնի:

3 կողմ ձայն ստանալով, չի անցնում:

Ուրեմն վերոհիշյալ խնդիրը այսօր և եթե քննության է դրվում: Հայտարարում եմ կես ժամ ընդմիջում:

### Ընդմիջում

Կես ժամ ընդմիջումից հետո նախագահը հայտարարում է նիստը վերսկսված՝ ձայն տալով պատգամավոր Վրացյանին:

**Վրացյան** - Ի նկատի ունենալով, որ դրված հարցը կապ ունի մեր առաջարկի հետ, ուստի առաջարկում եմ այդ երկու խնդիրը միասին քննել:

Առաջարկը ընդունվում է խորհրդի կողմից:

**Ավագ քարտուղար** - Կարդում է դաշնակցության ֆրակցիայի հետևյալ առաջարկը:

«Սովոր մեր երկրում երթալով ավելի ու ավելի սպառնական է դառնում: Սովա-մահության դեպքերն այլևս սովորական երևույթների կարգն են անցել: Հացի պակասությունը առաջ է բերում համաճարակ հիվանդություններ և սարսափելի չափերի է հասցրել բժավոր տիֆը:

Մեր պետությունը սեփական միջոցներով չի կարող այնքան հաց ունենալ, որ կարողանա փրկել ժողովուրդը սովամահությունից: Դրա համար ոչ հարկավոր միջոցներ կան, ոչ էլ ներքին շուկայում՝ հացահատիկ: Հարկավոր է անմիջական արտաքին օգնություն, որ կարող են հասցնել միայն դաշնակից պետությունները:

Այդ նպատակով Հայր Հեղափոխականը Դաշնակցության ֆրակցիան առաջարկում է խորհրդարանի առաջիկա նիստի օրակարգի մեջ դնել դաշնակիցներին օգնության դիմելու հարցը: Մենք կարծում ենք, որ խորհրդարանը, բացի կառավարության ձեռք առած միջոցներից, իր կողմից պետք է դիմում անի դաշնակից պետությունների պառլամենտներին ու ժողովուրդներին և պարզելով մեր ժողովրդի կատաստրոֆիկ վիճակը, խնդրի մեզ օգնության հասնել՝ հնարավորություն տալով ստանալ հաց և պարենավորման այլ մթերքներ: Բացի այդ, խորհրդարանը պետք է իրահանգի կառավարության՝ առանց հետաձգելու մարդ ուղարկել Ամերիկա, Հյուսիսային Կովկաս և այլ վայրեր՝ արագացնելու համար ցորենի առաքումը»:

Հայր Հեղափոխականը Դաշնակցության ֆրակցիայի նախագահ (ստորագրություն) 16 հունվարի 1919թ. Երևան

**Աղաքաբեկով** - Պարենավորման միջոցների պարոն պաշտոնակատարը ասաց, որ մենք փակված ենք չորս կողմից և արտաքին աշխարհի հետ ոչ մի հաղորդակցություն չունենք, բայց նա չասաց այդ փակման պատճառները: Պատճառներից ամենազլխավորն այն է, որ մենք չունենք մեր երկրում իրավակարգ: Կատարվում են մի շարք հանցագործություններ, որոնք մնում են անպատիժ: Սասունցիները 6 թուրքական գյուղերի սրի են մատնել, կառավարությունը վերոհիշյալներին չի պատժել: Այդ լուրը տարածվել է և Շարուրում, որոնք իրենց ֆիզիկական գոյության փրկության համար հայոց պետությանը չեն ենթարկվում: Կարսի ազգաբնակչությունը ոչինչ չունի հայ գաղթականների վերադարձի համար, միայն թե խմբերը չվերադառնան:

Եթե մենք հիմա ուղարկում ենք պատգամավորություն Թիֆլիս, ոչ մի արդյունք չի ունենա այդ առաքումը, մինչև որ մեր երկրում իրավակարգ չհաստատվի: Ես ընդունում եմ, որ տաճկական ագենտություն\* գործում է Դարսում, Շարուրում, Նախիջևանում, որին ականայից ենթարկվում են տեղական թուրքերը՝ իրենց ֆիզիկական գոյությունը փրկելու համար:

Ուստի ես առաջարկում եմ հենց վաղն և եթե իրահանգել, որ այլևս խմբեր չլինեն և վերջ տալ այս անարխիային: Եթե հաստատվի հարկ եղած իրավակարգը, ես լիահույս եմ, որ տեղական թուրքերը կճանաչեն և կենթարկվեն Հայաստանի պետությանը:

**Երվանդը Հարությունյան** - Մեզ բոլորիս հայտնի է, որ ծանր կացության մեջ ենք գտնվում, և առավել, երբ պարենավորման միջոցների պաշտոնակատարը զեկուցեց, որ մենք ապրում ենք օրերով: Եվ այդ դրությունից դուրս գալու համար պետք է դիմենք դաշնակից պետություններին: Պատգամավոր Մինսխորյանի այն միտքը, թե դաշնակիցները վնաս են բերել մեզ, դա ճիշտ չէ: Մենք պետք է առաջնորդվենք ռեալ շահերով և երբեք դեմ չպետք է խոսենք դաշնակիցներին: Դաշնակիցների Անդրկովկաս գալը մեզ շատ է օգնել, և նա իր հաջող հետևանքները կտա: Եթե մինչև հիմա դաշնակիցները մեզ չեն օգնել, դա նրանից է, որ նրանք ուժ չունեն: Չորսկես տարի մենք ունեցել ենք դաշնակիցների օրին-

\* Այդպես է տեքստում, պետք է լինի ագենտուրան.-Ծանոթ. կազմ.:

տացիան: Հիմա, երբ նրանք եկել են մեզ մոտ, պատգամավոր Մինախորյանը թույլ է տալիս իրեն անկողնեկտ վերաբերմունք դեպի դաշնակիցները:

Դաշնակիցները Հայաստանի վերածնության հարցն են դրել, հետևապես նրանք պետք է մեր ժողովրդի ապրելու մասին մտածեն: Սակայն նրանք այժմ չեն կարող մեզ հաց մատակարարել, որովհետև պատերազմը քայքայել է բոլոր երկրները:

Երկրորդ՝ հավանական է, որ դաշնակիցները լավ տեղյակ չեն Հայաստանի կացության հետ: Այս առթիվ Դաշնակցության ֆրակցիայի առաջարկը ճիշտ է և ընդունելի: Հայաստանի խորհրդարանը պետք է դիմի դաշնակից պառլամենտներին, երկրորդ՝ Ամերիկա հատուկ պատվիրակություն պետք է ուղարկել: Մենք համաձայն ենք նաև խորհրդի նախագահին Թիֆլիս ուղարկելու հետ՝ ծանոթացնելու ստեղծված կացության և հաց խնդրելու համար:

Միևնույն ժամանակ մենք պետք է ստեղծենք մեր ներքին կյանքում իրավապարզ և վերացնենք խմբերը, որոնք երկրի ներսում մի երկրորդ իշխանություն են հաստատել և դրանց շնորհիվ է, որ թուրքերը ներս չեն բողոնում մեզ և ցորեն չեն տալիս:

**Հայկյ Սարգսյան** - Այս ծանր դրությունից մեզ պետք է դուրս բերի մի ուժեղ ձեռք, և այդ ձեռքը դաշնակիցներն են: Բայց կա և թույլ ձեռք. դա թուրքերի ձեռքն է: Եթե դրանց միջից վերացնեն մութ ուժերը, որոնք ամեն կերպ նպաստում են երկու ազգերի պառակտմանը, գուցե երկու եղբայր ժողովուրդների դրությունը այդքան ծանր չլինի: Ես շատ ուրախ եմ, որ պատգամավոր Աղաբաբեկովը իր ճառը ասաց, դա կլինի պատրվակ, որի վրա հենվելով մենք պետք է հաստատենք երկու ազգերի եղբայրությունը: Եթե մենք կարողացանք խաղաղ ապրել, երբեք անգլիացին չի միջամտի մեր ներքին գործին և չի ասի, թե հայերին ցորեն տվեք: Մենք փոխադարձ համաձայնությամբ կստանանք և՛ ցորեն, և՛ այլ իրեր: Ուստի խորհուրդը պետք է մի օր խոսի հայ-թուրքական հարաբերության մասին:

**Վրացյան** - Երբեք պարենավորման հարցը այնքան սուր կերպարանք չի ստացել ոչ մի տեղ, ինչպիսին ստացել է այժմ Հայաստանում: Երկիրը մատնված է սովամահության: Այն տեղեկությունները, որ մենք ստանում ենք Սուրմալուից, Սարդարապատից և Կողբից, այդ բոլորը ցույց են տալիս, որ վերոհիշյալ վայրերի ժողովուրդը ապրում է վայրկյաններով, որից հետո մատնված է մահվան:

Հաց չկա, պարենավորման գործը կաղում է, ներքին շուկան որևէ միջոց չի տալիս: Այն գավառները, որոնք Հայաստանին են և ցորեն կա, դեռ չի անցել մեր ձեռքը: Այն վայրերը, որտեղ հաց կա, մեզնից բավական հեռու են, և մենք հաղորդակցություն չունենք նրանց հետ: Եվ այսպես, ստեղծվել է մի ճգնաժամային դրություն, որից պետք է դուրս գալ:

Միջոցներից մեկը ներքին շուկայի օգտագործումն է: Բայց դժբախտաբար ներքին օրգանները այնպես չեն կազմված, որպեսզի օգտագործեն: Սրանից մի ամիս առաջ պարենավորման միջոցների պաշտոնակատարը ասաց, որ մինչև իր գործի անցնելը պարենավորման գործը բոլորովին վատ հիմքերի վրա է դրված եղել: Նա խոստացավ այդ բոլոր թերությունները վերացնել, սակայն մենք տեսնում ենք, որ նախկին թերությունները ոչ թե վերացել, այլ առավել ևս վատթարացել են: Լիազորները կատարյալ գեղձարարներ են: Ասում են, որ դրանք բավականին ցորեն, բամբակ են գնել, այնինչ, ոչինչ չեն տեղափոխել մինչև հիմա Երևան: Պարենավորման մի գործակալ 20 մեշուկ ցորեն (100 փութ) է ուղարկում, մինչև պահեստ հասնելը ցորենը դառնում է 50 փութ: Հայտարարված է, որ արդեն գնված է 30.000 փութ չալթուկ, այնինչ մինչև դեկտեմբերի 27-ը բերվել է Երևան 3091 փութ, իսկ 27.000 փութ ցորենի փոխարեն 4000 փութ ցորեն է եղել: Թե ու՞ր են մնացածները, դա դեռ չի պարզվել: Ես կկարդամ ձեզ հետևյալ արձանագրությունը.

“Января 22-го дня 1919 года, гор[од] Эриван.  
Комиссия [в] составе председателя от министерства призрения Васулия Тер-Ованесяна, представителя от министерства продовольствия М. Бабаяна понятого Петроса Геворкова и контролера министерства продо-

вольствия С. Ехтаряна при осмотре чалтыка, присланного контр-агентов Татевосовым, нашла: из 450 мешков и приемлемыми в насоящее время 299 мешков, 73 мешка могут быть приняты после основательной очистки, так как в них 50% сору и песку, а остальные 78 мешков чалтыка не годно к употреблению и представляет из себя полусгнившую запласневшую и смрадным запахом массу, и ни в коем случае не допустимо к употреблению. В многих мешках оказались подковы, куски железа, большие глыбы камней, много песку и земли. Комиссия нашла необходимым о вышеизложенном составить протокол за подписями присутствовавших”.

Ի նկատի ունենալով վերոհիշյալ դրությունը, տեսնում ենք, որ խոստացած ապարատը չի ստեղծված, և դա հերթական խնդիրներից է: Պարենավորման միջոցների պաշտոնակատարը պետք է իրագործի իր առաջարկած ծրագիրը:

Թե որքան պարենավորման միջոցների պաշտոնակատարը անտեղյակ է մեր երկրի պարենավորման դրությունից, դա երևում է նրանից, որ նա ասաց, պատերազմի պատճառով Լոռիում և Ղազախում սով է: Ես տեղեկացա և իմացա, որ գործը ընդամենը վերոհիշյալ շրջաններից 1500 փութ ցորեն է ստացել, որից 700 փութ առաջ է եղել ստացված, իսկ 800 փութը՝ պատերազմի ժամանակ:

Այս բոլոր տեղեկությունները բերելիս իմ նպատակը չէ եղել քննադատել պարենավորման միջոցներին, այլ որպեսզի նա շահագործի ներքին շուկան:

Ցորեն ստանալու երկրորդ մոտ աղբյուրը տեղական թուրքերից է: Ապացուցված է, որ Սուրմալուի մի շարք գյուղերում կա բավականին ցորեն, մինչդեռ մոտիկ հայ գյուղերը քաղցից մեռնում են: Որպեսզի թուրքերից ցորեն ստացվի, պետք է հայ-թուրքական կնճռոտ հարցը լուծվի և ներքին իրավակարգ հաստատվի: Հայ-թուրքական էքսցեսների պատճառները ոչ թե խմբերն են, այլ՝ կառավարության ապարատի թուլությունը: Մենք ևս կողմնակից ենք, որ նման երևույթների դեմ պետք է պայքարել:

Սորա հետ միաժամանակ Հայաստանի խորհրդի թուրք ֆրակցիան պետք է միջոցներ ձեռք առնի, որ թուրք ազգաբնակչությունը հաց տա Հայաստանին:

Ինչ վերաբերում է խմբերին, թե՛ պառլամենտը և թե՛ կառավարությունը պետք է միջոցներ ձեռք առնի, որպեսզի դրանց վերացնի: Սակայն մեղադրել սասունցիներին, թե նրանք գյուղեր են կոտորել դիտավորյալ, դա ճիշտ չէ, ստեղծված կացությունը նրանց ստիպել է այդպես վարվել: Ամփոփելով ասածս, կառավարությունը և պառլամենտը պետք է միջոցներ ձեռք առնեն վերացնելու հայ-թուրքական հակամարտ դրությունը և թուրք ազգաբնակչությունը մոտ և հաղորդակից պահելու մեր պետությանը: Սա որոշ չափով կնպաստի մեր պարենավորման խնդրին:

Հացի երրորդ աղբյուրը արտասահմանն է: Կառավարությունը պետք է շուտ ուղարկի պատգամավորությունը Ամերիկա, բայց նա շատ դանդաղել է այս խնդրում: Եթե մինչև հիմա այդ առթիվ ոչինչ չի արված, նա պետք է անմիջապես ուղարկի պատգամավորությունը: Առաջին հերթին պատվիրակություն պետք է ուղարկել Հյուսիսային Կովկաս և հետո՝ Ամերիկա: Վերջին վայրում մեզ անպայման կաջակցեն թե՛ դաշնակիցները և թե՛ տեղի հայերը: Տեղեկություններ կան, որ 150 միլիարդ Ամերիկայից փող են ուղարկել մեզ: Դա ցույց է տալիս, որ հասարակական կարծիքը դեպի մեզ այդտեղ բարձր է և վառ: Ուրեմն կառավարությունը անմիջապես մարդիկ պետք է ուղարկի վերոհիշյալ տեղերը:

Այս բոլորից հետո մեր ֆրակցիան հետևյալ առաջարկն է անում.  
«Լսելով դաշնակցության ֆրակցիայի առաջարկի առթիվ պարենավորման միջոցների պաշտոնակատարի տված զեկուցումը մեր երկրի պարենավորման վիճակի մասին, Հայաստանի խորհրդարանը որոշում է.

1. Ուղարկել Թիֆլիս, դաշնակից գործերի վերին հրամանատարության մոտ խորհրդարանի նախագահին՝ արագացնելու համար Հայաստանին պարեն հասցնելու գործը:

**Նախագահ** - Այլևս առարկություններ չկա՞ն:

**Պարեն[ավորման] մին[իստորի] պաշտոնակատար** - Ես հարկադրված եմ մի քանի խոսքեր ասելու: Պատգամավոր Վրացյանը մի շարք մեղադրանքներ արավ պարենավորման միջնատրոսության վերաբերմամբ: Այդ մեղադրանքները անհիմն են: Իսկ նոր առաջարկների մասին նույնպես պիտի հայտնեմ, որ նորություններ չեն: Պարենավորման միջնատրոսության կողմից ես մի քանի անգամ ձեզ հայտնել եմ այն կատաստրոֆիկ դրության մասին, որին ենթարկվելու է պետությունը: Այն դեպքերը, որ բերեց պատգամավոր Վրացյանը, նա պիտի իմանա, որ այդ դեպքերը երևան է հանել պարենավորման միջնատրոսությունը և երբ հանցագործներին պատասխանատվության կանչել են, դա ցույց է տալիս, որ արդեն որոշ կարգ է մտել: Ահա թե ինչ է կատարել միջնատրոսությունը: 10.000 փութ ցորենի մասին միջնատրոսությունը ի՞նչ հանցանք ունի, որ չի ստացվել: Ինձ մոտ է այդ առթիվ անգլիական հրամանատարի գրությունը: Սուրմալուից ցորեն չի կարելի ստանալ: Ի՞նչ պետք է անել՝ կմնա գորթ և թնդանոթ դրկել այնտեղ: Մի բան չպետք է մոռանալ, որ ապարատը արդեն կազմվել է, և դեպքերը ցույց տվին այդ բանը: Դուք ասում եք, որ երկու ամսվա ընթացքում կարող էր գնվել: Ես ձեզ ասում եմ, ցույց տվեք մի շրջան, որտեղից կարելի լիներ բերել: Այդ առթիվ պարոն Դրոն ինձ տեղեկություն հայտնեց, որ Լոռում ցորեն կա: Սակայն ինձ մոտ եկան վերջին անգամ պատգամավորներ, որոնք ցույց են տալիս մռայլ գույներով իրենց քաղցածությունը: Ինչ վերաբերում է այն առաջարկություններին, ես պիտի ասեմ, որ երկու ամիս առաջ արդեն ձեր ուշադրության հանձնված է:

**Վրացյան** - Այդպիսի առաջարկություն չի եղել:

**Պարեն[ավորման] մին[իստորի] պաշտոնակատար** - Աղբբեջանի և Վրաստանի ճանապարհները պետք է բացվեն մեր առաջ: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ մենք բարեկամական հարաբերությունների մեջ լինենք նրանց հետ: Աղբբաբեկովի ասածի մեջ կարծես մեղադրական կետ կա. նա ասում է, որ կարգ չկա երկրի մեջ: Կարգը ամեն մտքով հարկավոր է: Ես կարծում եմ, որ ներքին կարգի մասին խոսք չի կարող լինել: Խոսքը արտաքին քաղաքականության մասին է: Այստեղ քաղաքական հարց կա: Պետք է մեր հարաբերությունները հարթել մի կողմից Տաճկաստանի, մյուս կողմից՝ Վրաստանի և Աղբբեջանի հետ: Այլապես ուրիշ ձևով անհնար է, սակայն այսօրվա հացի խնդիրը չկապել տիրող անտիրության հետ: Այն բոլորը, ինչ որ առաջարկվում է, ընդունելի է: Պետք է մտածել Ամերիկայի մասին: Առաջին հերթին պառլամենտի կողմից պետք է դիմում կատարվի:

**Ավագ քարտուղար** - Կարդում է դաշնակցության ֆրակցիայի բանաձևը.

«Լսելով դաշնակցության ֆրակցիայի առաջարկի առթիվ պարենավորման միջնատրոսի պաշտոնակատարի տված զեկուցումը մեր երկրի պարենավորման վիճակի մասին, Հայաստանի խորհրդարանը որոշում է.

1. Ուղարկել Թիֆլիս, դաշնակից գործերի վերին հրամանատարության մոտ, խորհրդարանի նախագահին արագացնելու համար Հայաստանին պարեն հասցնելու գործը:
2. Խորհրդարանի կողմից դիմում անել անգլիական, ֆրանսիական և ամերիկյան պառլամենտներին և պարզելով Հայաստանի ներկա ծանր վիճակը, խնդրել պարեն հասցնել Հայաստանին:
3. Հանձնարարել կառավարությանը այն դիմումը անել Փարիզի միջազգային պարենավորման կոմիտեին:
4. Պարտավորություն դնել կառավարության վրա անմիջապես ներկայացուցիչներ ուղարկել Ամերիկա և Հյուսիսային Կովկաս Հայաստանին պարեն հասցնելու գործը փութացնելու համար»:

**Նախագահ** - Թույլ տվեք նախքան քվեարկությունը անել մի քանի նկատողություններ: Այստեղ կան միատեսակ առաջարկներ: Այստեղ կառավարության մասին այնպիսի կետեր կան, որոնց չենք կարող քվեարկության դնել, որովհետև օրակարգի մեջ հատկապես դրած չենք: Ուրեմն թույլ տվե՞ք մաս-մաս քվեարկել:

Քվեարկության է դրվում դաշնակցության բանաձևի առաջին կետը: Անցնում է 23 ձայնով՝ ընդդեմ 7-ի:

**Ավագ քարտուղար** - Կարդում է երկրորդ կետը:  
**Պարաբեկյան** - Պետք է հիշատակել և իտալական պառլամենտը ( ընդունվում է):

**Երվանդի Հարությունյան** - Դիմել ոչ միայն պառլամենտներին, այլև կառավարություններին:

**Նախագահ** - Պարլամենտը դիմում է միայն պառլամենտներին: Քվեարկում եմ դաշնակցության բանաձևի երկրորդ կետը: (Պարաբեկյանի հավելումով միաձայն անցնում է):

**Ավագ քարտուղար** - Կարդում է դաշնակցության ֆրակցիայի բանաձևի երրորդ կետը:

**Մինիստր-նախագահ** - Կառավարությունը պարտք է զգում հայտարարելու, որ նա 3-րդ կետի մեջ հիշատակած Փարիզի միջազգային պարենավորման կոմիտեի մասին տեղեկություններ չունի:

**Վրացյան** - Այսօր թերթերում կարդացինք, որ Փարիզում պարենավորման միջազգային խորհուրդ գոյություն ունի և 80 միլիոն ստեռլինգ է տրամադրել՝ Հայաստանում ապրող ժողովուրդներին օգնություն հասցնելու համար:

**Մինիստր-նախագահ** - Լրագրական տեղեկությունները մենք չենք կարող հիմք ընդունել:

**Վրացյան** - 80 միլիոն ստեռլինգի խնդիրը կարող է սխալ լինել, բայց այդ կոմիտեի գոյությունը կասկածից դուրս է:

**Երվանդի Հարությունյան** - Այդ պարենավորման կոմիտեն որ կա, նա, անշուշտ, գործադիր իշխանության ներկայացուցիչ է: Այնպես որ, առաջարկում եմ այդ կետը դուրս ձգել և դնել «Դիմել դաշնակից պետությունների կառավարություններին»:

**Վրացյան** - Այդ կոմիտեի գերագույն մարմնի նշանակություն ունի: Բայց դա չի խանգարում, որ կառավարությունն անի իր դիմումները:

**Մինիստր-նախագահ** - Մենք արդեն դիմում ենք Կովկասի իշխանություններին: Այլևս անհարմար կլինի, երբ մենք կդիմենք տարբեր ինստանցիաների: Երբ գեներալ Միլլին ենք դիմում, նա արդեն դաշնակից գործերի ներկայացուցիչն է:

**Նախագահ** - Ես քվեարկում եմ պատգամավոր Եր. Հարությունյանի առաջարկը (չի անցնում):

Քվեարկվում է երրորդ կետը և 23 ձայնով անցնում է:

**Ավագ քարտուղար** - Կարդում է չորրորդ կետը:

**Մինիստր-նախագահ** - Կառավարությունը առաջիկա միստում կպատրաստի և կներկայացնի խորհրդին այս հարցի մասին մի նախագիծ: Գուցե այդ մասին առաջմ վաղաժամ է խոսել:

**Վրացյան** - Այդ կետը կարելի է հանել, միայն այն պայմանով, որ հառաջիկա միստում ներկայացվի:

**Նախագահ** - Քվեարկում եմ սոց[իալ]-դեմ[ոկրատական] ֆրակցիայի և էստեների բանաձևերը:

Առաջինն ստանում է 8 ձայն, երկրորդը՝ 9 և չեն անցնում:

**Բժ[իշկ] Բաբայան** - Ուզում էի հարցնել, թե ինչքա՞ն շուտ կմեկնի նախագահը:

**Նախագահ** - Ես հայտնում եմ, որ նախագահը պատրաստ է հենց այս րոպեից մեկնել: Դա կախված է, իհարկե, կառավարությունից և ճանապարհների հաղորդակցության դրությունից:

**Մուշեղյան** - Որոշվեցավ դիմել պառլամենտներին, այդ դիմումը ու՞մ միջոցով պիտի կատարվի:

**Նախագահ** - Պառլամենտի նախագահը պիտի դիմի՝ խորհրդակցելով Ավագների խորհրդի հետ:

**[Դավիթ] Ջուրյան** - Այսպիսի պարագաներում որոշ փափկանկատություններ պետք է նկատի ունենալ: Առաջարկում եմ ընտրել մի կոմիտեա, որ զբաղվի այդ թղթերի խմբագրությամբ:

**Ձայներ** - Ուշանում է:

*Նախագահ* - Այստեղից առաջարկություններ են լսվում, որ ուշանում է: Եթե մենք այսքան ուշացել ենք, թող մեկ օր էլ ուշանանք: Դրա համար առաջարկում եմ վաղը կեսօրին նիստ գումարել և լսել այդ առաջարկները:

*Վրացյան* - Ոչ մի կարիք չկա առանձին կոմիսիա ընտրելու: Մենք ունենք Ավագների խորհուրդ, որը կխորհրդակցի և կվճռի:

*[Դավիթ] Ջուրյան* - Մենք տնաբույս ձևերով ենք առաջնորդվում:

*Նախագահ* - Ուրեմն երկու առաջարկ կա.

1. Հատուկ կոմիսիա ընտրել և

2. Հանձնել Ավագների խորհրդին և նախագահության:

*Վրացյան* - Ես չեմ հասկանում, թե որտեղի պառլամենտի կարգն է, որ այդ կերպի առաջարկ է լինում: Մենք առաջարկում ենք նախագահության և Ավագների խորհրդին՝ միասին խմբագրել այդ դիմումները:

*Նախագահ* - Ովքեր որ համաձայն են հեռագիրները խմբագրելուց հետո պառլամենտին ներկայացվեն, թող ձեռք բարձրացնեն: 9 ժայն՝ չի անցնում:

*Նախագահ* - Ժամանակը ուշ է: Դրա համար ես նիստը փակում եմ:

*Մինիստր-Նախագահ* - Թիֆլիս գնալու համար վարկ չե՞ք բաց անի: Թերևս նախագահությունը գումար ունի:

*Ավագ քարտուղար* - Մենք օրենք ունենք, որ պատգամավորությունը իրավունք ունի օրապահիկի և ճանապարհածախս անելու:

*[Հայկ] Ազատյան* - Մենք դեմ ենք այդ բանին: Ներկայացուցչական ժախսեր կարող են լինել:

*Երվանդ] Հարությունյան* - Մեր ֆրակցիան առաջարկում է պատգամավորությանը հատկացնել 25.000 ռուբլի:

*Վրացյան* - Գնացող պատգամավորությունը կամ նախագահը պետք է ունենա որոշ դրամազուլիս: Ինչ առաջարկ որ անում է հայ ժողովրդական կուսակցությունը, ընդունելի է:

*Միրլական] Տեր-Մարտիրոսյան* - Օրապահիկներից և ճանապարհածախսերից զատ կան որոշ գումարներ, որ պետք է տրամադրել պատգամավորությանը: Ես առաջարկում եմ 10.000 ռուբլի:

*Ավդալբեկյան* - Մենք առաջարկում ենք 5.000 ռուբլի:

*Նախագահ* - Քվեարկության եմ դնում եղած առաջարկները:

15 ձայնով անցնում է 10.000 ռուբլու առաջարկը:

Նիստը փակվում է:

*Քարտուղար՝ Ե.Սարգսյան*

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 83-100: Բնագիր: Չեռագիր: